ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ Թ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 24-ին, ժամը 11.00-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի ընդարձակ սրահում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ և Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանի, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի ատենապետությամբ, իր աշխատանքներն սկսեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված Թ նիստը, որն ուներ հետևյալ օրակարգը.

1. Բացման աղոթք,
2. Հայրապետական ողջույնի խոսք,
3. Նախորդ նիստի արձանագրության ընթերցում և հաստատում,
4. Վեհափառ Հայրապետի զեկույցը,
5. Զեկույց կանոնադրության պատրաստման ընթացքի մասին,
6. 1700-ամյակի տոնակատարությանց հատուկ աշխատանքներ,
7. Հարաբերություններ Նվիրապետական Աթոռների հետ,
8. Երևանի Մայր եկեղեցու շինության զարգացման ընթացք,
9. Տնտեսական կացություն-հաշվական զեկույց,
10. Ընդհանրական հարցեր,
11. Առաջիկա նստաշրջանի ճշտում:

Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստին ներկա էին մնալու անդամներ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը, աշխարհական անդամներ տիարք Վլադիմիր Բարխուդարյանը, Գրիգոր Խանջյանը, Պիոն Հակոբյանը, Ռաֆայել Պապայանը, ընդլայնված կազմի անդամներ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, Ավստրալիայի և Նոր Զեղանդիայի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը:

Նիստի անդրանիկ օրվա աշխատանքներին ներկա չէին Երուսաղեմի Պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Տիրան, Գիսակ և Ասողիկ Սրբազանները:

Բացման աղոթքից հետո, ժողովականներին իր ողջույնի խոսքը հղեց Վեհափառ Հայրապետը՝ միաժամանակ ցավ հայտնելով, որ առողջական

վիճակի վատացման պատճառով չկարողացավ վերադառնալ Մայր Աթոռ, և հուլիսին գումարվելիք նիստը հետաձգվեց մինչև օգոստոս ամիսը: Այնուհետև Նորին Սրբության առաջարկով ներկաները հոտնկայս «Հոգւոց» արտասանեցին Կ. Պոլսո երջանկահիշատակ Պատրիարք Գարեգին արքեպս. Գազանճյանի հոգու խաղաղության համար:

Գերագույն Հոգևոր Խորհրդի մասնակիցները
Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ

Աղոթքից հետո, Վեհափառ Հոր հրավերով, ժողովի ատենապետությունն ստանձնեց գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, քանի որ մյուս ատենապետը՝ գերաշնորհ Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Մայր Աթոռ էր ժամանելու փոքր-ինչ ուշացումով:

Ատենապետ Սրբազանը Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից նախ ողջունեց Նորին Սրբության վերադարձը Մայր Աթոռ, ապա մաղթեց լիակատար ապաքինում, որից հետո հրավիրեց ժողովականներին՝ իրենց առաջարկները ներկայացնել օրակարգի վերաբերյալ:

Առաջարկներով հանդես եկան Գարեգին, Գևորգ, Խաժակ, Աղան, Անանիա Սրբազանները, տիար Ռաֆայել Պապայանը:

Այնուհետև ատենադպիր Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանն ընթերցեց նախորդ՝ Ը նիստի արձանագրությունը, որի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն: Իրենց նկատառումները հայտնեցին Վաչե, Գարեգին, Խաժակ Սրբազանները, Գ. Խանջյանը, Վ. Բարխուդարյանը: Որոշ սրբագրումներից հետո, արձանագրությունը վավերացվեց:

Նիստից նիստ ընկած ժամանակահատվածում Մայր Աթոռի գործունեության մասին բանավոր խոսքով հանդես եկավ Նորին Սուրբ Օծությունը:

Ժողովականներին մանրամասն տեղեկություններ տալով իր առողջական վիճակի մասին՝ Նորին Սրբությունը միաժամանակ հայրապետական գնահատություն տվեց Վանական խորհրդին՝ չորսամսյա իր բացակայության ընթացքում Մայր Աթոռի ընթացիկ գործերը հաջողությամբ վարելու համար:

Գարեգին Սրբազանի առաջարկով անմիջական քննարկման հարց դարձավ պետություն-Եկեղեցի հարաբերությունը: Որոշվեց Մայր Աթոռին առընթեր ունենալ իրավաբաններից և հոգևորականներից կազմված իրավաբանական հանձնաժողով:

Օրվա երկրորդ կեսին, ժամը 18.30-ին, նիստը շարունակեց աշխատանքը: Շարունակելով զեկույցը՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի գործունեությանը՝ շեշտելով տեսչական և ուսուցչական կազմի զորացման անհրաժեշտությունը:

Հոգևոր Ճեմարանի գործունեության, ինչպես նաև ներքին թեմերից ուսանողներ ուղարկելու վերաբերյալ արտահայտվեցին Գևորգ, Գարեգին, Անանիա, Պարգև, Խաժակ Սրբազանները: Քննարկումը եզրափակվեց Վեհափառ Հոր՝ առկա հարցերը տեսուչ Հայր Սուրբին ներկայացնելու որոշումով:

ՔԴՔԿ-ի վարիչ-տնօրեն Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը ներկայացրեց վերջին ամիսներին Կենտրոնի գործունեությունը: Այդ առիթով արտահայտվեցին Վաչե, Գարեգին, Պարգև, Խաժակ, Աբրահամ Սրբազանները, Պ. Հակոբյանը, Ռ. Պապայանը: Արված դիտողություններին պարզաբանումներ տվեց վարիչ-տնօրեն Հայր Սուրբը: Քննարկումը եզրափակեց Նորին Սրբությունը՝ շեշտելով ՔԴՔԿ - թեմ համագործակցության անհրաժեշտությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Մայր Աթոռի տնտեսական ու շինարարական աշխատանքներին, իր հովվապետական այցելություններին, ինչպես նաև միջեկեղեցական, Մայր Աթոռ - թեմեր փոխհարաբերություններին:

Նիստն իր աշխատանքները շարունակեց մինչև օգոստոսի 25-ը: Քննարկվեցին 1700-ամյակի տոնակատարություններին, Երևանի Մայր եկեղեցու շինարարությանը, նվիրապետական Աթոռների հետ հարաբերություններին, Եկեղեցու կանոնադրության մշակմանը վերաբերող հարցեր:

Ժողովականների առաջարկով Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը անդրադարձավ նաև Հայաստանում կրոնական կազմակերպությունների և աղանդավորների գործունեությանը, Եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայաստանից դուրս գործող հայկական եկեղեցիների վերանորոգման խնդիրներին:

Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված Թ նիստն իր աշխատանքներն ավարտեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ